ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» հոկտեմբերի 2018 թվական N 102-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԺԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի պահանջով , հաշվի առնելով այն, որ քաղաքացի Հակոբ Խաչիկի Աթանեսյանը, սեփականության իրավունքով իրեն պատկանող 16-րդ փողոց թիվ 2 հասցեի տնամերձ հողամասում՝ կադաստրային ծածկագիր 07-043-0128-0247, ինքնակամ իրականացրել է շինարարական աշխատանքներ և կառուցել բնակելի տուն,

որոշում եմ.

1.Քաղաքացի Հակոբ Խաչիկի Աթանեսյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ գումարի չափով:

2.Պարտավորեցնել՝ օրենքով նախատեսված 15-օրյա ժամկետում մուծելու տուգանքը Մայակովսկի համայնքի բյուջեի N 900105222104 հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2018թ.հոկտեմբերի 8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

<< Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<15 >> հոկտեմբերի 2018թվական N 103 -Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաաքացի Հակոբ Խաչիկի Աթանեսյանի դիմումը , որով նա ցանկություն է հայտնել օրինակեցնել սեփականության իրավունքով իրեն պատկանող 16-րդ փողոց թիվ 2 հասցեի տնամերձ հողամասում / ծածկագիր 07-043-0128-0247 / գտնվող շինությունները :

Համայնքի կադաստրային քարտեզի և «Վալերիկ Գալստյան» ԱՁ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ քաղաքացի Հակոբ Խաչիկի Աթանեսյանին սեփականության իրավունքով պատկանող 16-րդ փողոց թիվ 2 հասցեի տնամերձ հողամասում 2015 թվականին կառուցվել է 'ինքնակամ բնակելի տուն Տարտ=96.04 քմ :

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10,11,13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը , որ քաղաքացի Հակոբ Խաչիկի Աթանեսյանին սեփականության իրավունքով պատկանող 16-րդ փողոց թիվ 2 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ՝***

1. Քաղաքացի Հակոբ Խաչիկի Աթանեսյանին սեփականության իրավունքով պատկանող 16-րդ փողոց, թիվ 2 հասցեի տնամերձ հողամասում կառուցված ինքնակամ բնակելի տունը՝ Տարտ=96.04 քմ համարել օրինական :

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Մայակովսկի համայնքի բյուջեի N 900105222229 հաշվին պետք է վճարի 201 684 (երկու հարյուր մեկ հազար վեց հարյուր ութսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2018թ.հոկտեմբերի15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 0222 6 05 22 E-mail mayakovski-1@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

<<15>> հոկտեմբերի 2018թվական N 104-Ա

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ

Մայակովսկի համայնքապետարան է դիմել Երևանի Մովսես խորենացու անվան համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի առաջին կուրսի ուսանող, համայնքի 3-րդ փողոց, 1-ին նրբ. տուն 5 հասցեի բնակիչ Գայանե Խուդաշյանը, հայտնելով, որ չի կարողանում վճարել ուսման վարձը , ուստի խնդրում է կատարել դրամական փոխանցում :

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24- րդ կետի պահանջը. համայնքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 47-Ա որոշումը,

որոշում եմ՝

1. Կատարել փոխանցում Գայանի Խուդաշյանի անունով 110 000 / հարյուր տաս հազար / դրամ ուսման վարձ՝ <<Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ>> ՓԲԸ , 220003333808000 հաշվի համարին :
2. Հանձնարարել հաշվապահ Աստղիկ Հարությունյանին կատարել փոխանցում :
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

2018թ.հոկտեմբերի 15
Գ. Մայակովսկի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հոկտեմբերի 2018 թվական N 105-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին » օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը, « Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջները , ***որոշում եմ.***

1.Մայակովսկի համայնքի վարչական տարածքում գտնվող, քաղաքացի Արամ Աբրամյանին համասեփականության իրավունքով պատկանող՝

13-րդ փողոց թիվ 55 , /07-043-055-004 կադաստրային ծածկագիր/ ,

13-րդ փողոց թիվ 55/1 , /07-043-055-026 կադաստրային ծածկագիր/,

13-րդ փողոց թիվ 53 /07-043-055-005 կադաստրային ծածկագիր/

հողամասերը միավորել և միավորված հողամասերին տալ մեկ հասցե.

գյուղ Մայակովսկի, 13-րդ փողոց , թիվ 55 հասցե :

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2018 թվականի սեպտեմբերի 18-ի «Անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին» թիվ 93-Ա և « Անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին» թիվ 94-Ա որոշումները :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի

2018թ.հոկտեմբերի 15